

կարնէն ելլէ, Դերձան իջնէ և անկէ
երզնկայի կողմերը երթայ, ուր կը սկը-
սի Եփրատ (Ֆրատ) կոչուիլ: Երկու
Ծաղկէոյ ծոցերէն ծնած ջուխտակն Ե-
փրատ և Մուրատ՝ դէպ յարեմուտը դի-
մելով և Հայոց քանի մ'աշխարհներ ի-
րենց անկեան մէջ գրկելով՝ Կապանայ
(Քէպան-մատէնի) քով իրարու կը
խառնուին. անկէ ետե Եփրատայ ա-
նունն կը պահուի, ինչուան որ Մեծ և
փոքր Հայոց աշխարհները իրարմէ կը
տրեւելով, զԱսորիս ալ 'ի Միջագետաց,
ապա Ասորեստանի և Բաբելոնի մէջ Տի-
գրիսի հանդիպելով և անոր խառնուե-
լով լայն և յորդ գետ մը կ'ըլլայ, Շադ-
իւլ-Արապ. և այս անուամբ կը հասնի
ինչուան Հնդկային ովկիանոսի անկիւ-
նածայրը, այսինքն Պարսկային ծոցը.
Կարնոյ դաշտին ծայրէն և 8000' բարձր
լեռնաղբիւրէն բղխած զլուխը՝ բոլոր
անձամբը՝ այն հեռաւոր ծովուն աւան-
դելով, յետ լսելու՝ նախ Հայոց և ապա
դանազան ասիական հին ազգաց լեզու-
ները, որոնց հին և նոր բաղդիցն ալ
վկայ է: Այս տեսութեամբ՝ կարծեմ
չեմ սխալիր՝ եթէ աշխարհիս ամենէն
նշանաւոր, միանգամայն ամենէն հին
գետն ալ կոչեմ զսա. նաև սրբազնա-
դոյն գետոյ՝ յառաջ քան զՅորդանան,
առաջին և վերջին գետ կրօնական աշ-
խարհի: Վասն զի առաջին սուրբ Գրոց
մէջ Եփեմայ չորս գետերուն յիշատա-
կութեան ատեն՝ մէկալններուն համար
պէտք կ'ըլլայ նշաններ տալ, ասոր հա-
մար առանց նշանի և սահմանի՝ որպէս
թէ գետոց ծանօթագոյնն կամ թագա-
ւորն ըլլար, կ'ըսուի. « Եւ գետն չոր-
» բորդ՝ Եփրատէս ». — Իսկ ամենէն
վերջին Ս. Գրոց մէջ, որ միանգամայն
և մարդկային ցեղին պատմութեան վեր-
ջին էջն է, յետ ամենայն տեղեաց և ա-
նունաց, անցից և հոսանաց՝ անգամ
մ'ալ կ'երևի Եփրատ, միայն Եփրատ.
և միայն այն ատեն աներևոյթ կ'ըլլայ,
երբ այս բոլոր երկիրս կերպարանափոխ
ընողն, արեւելի ամենիշխան թագա-
ւորն՝ կ'երևի և կու գայ. և կու գայ նոյն
իսկ Եփրատայ լռած դադրած ալիքնե-

րուն ցամքած ճամբէն. « Գետոյն մեծի
» Եփրատայ, ցամաքեցան ջուրք նորա,
» զի պատրաստեսցի ճանապարհ թա-
» գաւորի ելիցն արևու »...: Նախնիք՝
Կարնոյ գաւառը կամ աշխարհը Կա-
տար Երկրի, երկրիս ծայր կամ գլուխ
կը կոչէին. Ս. Գիրք ահա կը ցուցնեն՝
որ այն կատարէն բղխած ջուրն՝ աշխար-
հիս բոլոր ընթացքը օրինակելով՝ անոր
վերջին կատարն ալ պիտի ըսուի. կամ
թէ այն գետոյն երկու ծայրից մէջ խոր-
հորդաբար պիտի բովանդակուի մարդ-
կութեան երկրաւոր վիճակն և ժամա-
նակն: ... Անշուշտ, ով որ բաղդ ունե-
ցեր է այս Կարնոյ եփրատաբուղխ լե-
րանց վրայ ելլել և անոնց ծործորներէն
իջած աղբիւրները տեսնել, քանի մը
ժամ Շեղջիկ, Տումլի, Պար և Ծաղկի
լեռանց ծաղկամարդ տափերուն վրայ
հանգչիլ, և քիչ մը անցեալն ու ապա-
գայն մտածել, անշուշտ այնպիսին պի-
տի ներէ իմ հոն ըրած և հոս յայտնած
այս և ասոր նման մտածութեանցս. զոր
ընդհատելով իջնենք հիմայ 'ի դաշտն
Կարնոյ:

Կը շարունակուի:

Ա. Ռ. Մ Ո Ւ Ս Ա Յ

Անմահ հրեշտակ, որ մանկական
Որորոցիս քով հսկելով՝
վարդէ պըսակ հիւսել գլխուս
Մօրըս տայիր համբոյրներով,
Քեզ՝ երկնաւոր սիրոյն թարգման,
Քեզ՝ իմ ընկեր միայնութեան,
Առ քեզ՝ Մուսայդ իմ՝ սրլանան
Բոլոր իմ տենչքն և իմ գորով:

Ի՛նչ փոյթ ոսկին ինձ մեծատան
Ի՛նչ փոյթ շրուինդըն խնջոյից,
Զաստեղաց բոյլս՝ անսպառ գանձ՝
Զծաղկունս բոլոր տըւիր դու ինձ:
Եւ մինչ աշխարհս ինձ զըլանայ
Փոշոյ անկիւն մ'իսկ՝ ով Մուսայ,
Զեռքդ ասպարէզ ինձ կը բանայ
Զոսկիածոյլ զըրունս երկնից:

Ձերդ ծիածան անդրնդոյ վրայ
Գահաւանդից բազմեալ յեզեր՝
Ոտիցդ ի ստոր վըհից միջէն
Կը մռնչեն սև անտառներ .
Գլխուդ վերև հովանաւոր
Հողմակոծին մայրք դարեւոր ,
Հեղեղին ջուրք բարձանց 'ի ստոր .
Ձայնքդ այդ՝ Մուսայ , քոյ են երգեր :

Բնութիւն համայն՝ այդ մեծ քընար
Ոյր աստղազարդ գլուխն յերկին՝
Եւ ուրք յանդունդս անէութեան
Յաւիտենից երգէ վեհին ,
Երբոր սլանան իբրև նըւագ
Քո արտասուք կամ հառաչանք ,
Սիրով կու տայ քեզ արձագանգ՝
Ո՛վ դու Մուսայդ իմ երկնային :

Եւ երբ տրտում ժայռից 'ի գլուխ
Բազմեալ դիտեմ զծով ամպաթոյր ,
Եւ զառագաստն՝ ըսպիտակ թե՛
Որ տարադէմ գնայ յափուռնս իւր ,
Երբոր հոգւոյս վիշտք անհամար
Լուծուին յարտօսք անմըխիթար ,
Երբոր զիս որք կարծեմ իսպառ ,
Հրեշտակ՝ ժպտիս դու լուսասփիւռ :

Մինչդեռ կանուխ առաւօտուն
Նըւազ աչքով կոյսըն զարթնու ,
Մազերն արձակ՝ ձեռն 'ի ծնօտի
Անցնին մոքէն երազըն աղու ,
Երբ Արշալոյսն յեզերց երկնի
Ծաղկանց վըրայ կը խոնարհի
Եւ զարտասուս սրբէ վարդի՝
Մէկ համբոյրով մը սիրարկու :

Կամ երբ արփույ թափուին հոսանք
Ի խուան լեռանց՝ հսկայ ալիք ,
Ուր յանձանօթ թերևս հիւղի
Ո՛հ , անըսփոփ կաթին լալիք ,
Թշուառութիւն՝ ահեղ գիշեր՝
Երբ մեր վրայ սփռէ թեւեր ,
Ո՛վ կը մեղմէ , և մեր վշտերն ,
Ո՛վ կը տանի մինչև երկինք :

Մանուկ , ըսաւ ինձ բընութիւն ,
Նշդեհ ինկած յանդուլթ երկրի ,
Ոմանց գահոյս և ոսկի պսակ

Ոմանց խրճիթս և ցաւ տուի .
Վարդին՝ բուրմունս , կուսից՝ ժըպիտ
Արշալուսոյն թաղ մարգարիտ ,
Եւ դայլայլիկս առուին վըհիտ .
Քընար մ՝ ահա կու տամ քեզի :

Եւ այս հովտէս կ'երթամ միայնակ
Կոխեալ ընդ փուշ և ընդ քարինս .
Ընդ ցաւալի քրքիջ մարդկան
Կը ծիծաղի լոկ իմ հոգիս .
Եւ երբ խնդրեմ թէ ինչո՞ւ ես
Ձեմ շատանար այս աշխարհէս ,
Դու մատնանիշ կը ցուցընես՝
Ո՛վ իմ հոգւոյս ընկեր՝ զերկինս :

Երգ 'ի բերան անցնիմ ուրեմն
Ընդ այս կենաց ահեղ կամուրջ ,
Որ որրոցէն շիրմին տանի՝
Ձընայելով եղբրքէն յունջ՝
Եւ նետահար թռչնոյ նըման
Որ թեւաբաց ջուրց 'ի հոսանս
Նըւագելով կ'երթայ մահուան ,
Ես ալ անցնիմ սիրամբմունջ :

Երգէ հոգեակ դու , չե՞ս տեսներ
Ի՞նչպէս կ'երգէ վըտակն յընթաց ,
Թէ ընդ ծմակըս ծաղկածին
Թէ 'նդ ապալեր վախըս քարանց .
Կեանքս այս ժըպիտ մ'է և արցունք .
Անձրջ՝ ահեղ վըհի յափունք .
Երգովք հաշտին ցաւերն ու սուգ .
Երգն՝ արձագանգ մ'է հրեշտակաց :

Թէ և աշխարհ քու նըւագացդ
Ըլլայ՝ նտարբեր ու անխեղահաս ,
Մենիկ երգէ ծաղկին նըման
Որ կը փթթի անդր յանապատս .
Հազիւ զոմանս իր թերթերէն
Հողմունք 'ի շէնս անդրը վարեն .
Եւ դոյզն ինչ ամբ քեզ ինչ փոյթ են
Քեզ՝ որ ունիս ըզյաւիտեանս :

Ի կապուտակ անհունութեան
Նաւարկելով դարուց յալիս
Աստղըն գընայ 'ի սափորոյն
Հոսելով ուղիւս լուսալիս՝
Ի՞նչ փոյթ աստեղ թէ իր նըշոյլ
Մերթ պատանի յաշխարհաց բոյլ

Մեռեալ գնդից մերթ տայ համբոյր՝
Մերթ յոյնչին կորնչի վիհս :

Եւ այս ամբոխն՝ ո՛վ իմ Մուսայ՝
Եւ այս լալօնք և այս քրքիջ՝
Ալիք մըն է որ կը դիմէ
Գերեզմանաց 'ի կափարիչ .
Է բուրաստան մ'ուր համասպրամ
Քրքում, յասմիկ, վարդ խուռներամ
Մէկտեղ փթթին, ու ահա անժամ
Շնչէ մահու խորշակն այրիչ :

Ո՛հ, թէ այսպէս երգն ո՛վ Մուսայ՝
Քաղցրիկ բարբառ մ'է զըւարթնոց,
Եւ նըւագներն՝ ծաղկունք սրտիս,
Պէտք է սփռեմ քառից հողմոց .
Մի այլ փայլակն 'ի թռիչ մոնար
Ճակատելոց վաշտուց 'ի պար .
Մի . . պատմութեանդ այդ լուսավառ
Գուցէ արեամբ պղծի սրբոց .

Մի ուր զինւոյն ուխդ հրահոսան
Խաբեպատիր սփռեն ծաղկունս ,
Մի ուր Հըզօրք նենգ խորհրդովք
Դիչերախումբ նօթճեն տոռունս .
Մի ուր ոսկւոյ գետք դժոխարձակ
Սողոսկելով սրտերու տակ
Ապիրատին տան յաղթանակ՝
Մի հուպ երթար՝ ո՛վ իմ զըւարթունս .

Այլ միամօր ըստինքներէն
Ժպտելով քուն մոնող մանկան
Սփռէ անուրջս ոսկեղինիկ,
Յոյց հրեշտակաց ըզպատմութեան .
Ո՛հ, այնչափ կարճ է մանկութիւն ,
Այնչափ դիւրանց երջանկութիւն . . .
Բոլոր լոյսեր տեսնայ . . . ու դուն
Փրցուր այտէն վարդ մը միայն :

Իբրեւ ամպոյ սիւն առաջնորդ
Դու մարդկութեան յառաջընթաց ,
Լոյսեր սփռէ՝ յըստուերս երկրի ,
Սրտապնդէ զլոյս տրկարաց ,
Եւ երգէ զօրն ազատութեան՝
Յորում շղթայք պիտի իյնան
Եւ գըրկըւին ազինք համայն՝
Եղբարք օձտեալք 'ի թշնամեաց .

Յրցուր զերկինքս պատանւոյն
Հայրենավրէժ անկեալ 'ի մարտ ,
Քու կայծակներդ իջնան միայն
Բռնաւորին յըմբոստ ճակատ .
Եւ սիրեւեաց որ բաժնըւին ,
Եւ մօր՝ որդւոյն փարեալ շիրմին՝
Ու ամեն հոգեաց որ տառապին
Շնորհէ սփոփանքս խանդակաթ :

Եւ երբ մահու բացուին դըրունք
Մուտ՝ ո՛վ Մուսայդ իմ լուսապսակ ,
Յուցուր վեհին իբր անգին փունջ
Սրբած ցօղոց քոյ ըզկայլակ .
Եւ ըսէ . « Հօր դու՝ յայս երկիր
Ուր միայնակ գիս ձրգեցիր ,
Դու լոկ քընար մը ինձ տուիր ,
Ես թշուառաց տուի սփոփանք :

ԹՈՎՄԱՍ ԹԻՐԱՅԱՆ

ԻՄ ՎԱՆՔՈՒ

Դրաքեանի մը անտիպ յիշատակաւ
գիրք :

(Տես երես 17)

Ժամու մը չափ քալելէ ետեւ հասայ
ընդարձակ բնակարան մը , խոր միայ-
նութեան մէջ անշուք և բարձր որմով
մը շրջապատած : Երկու ժանգոտած
երկաթէ փեղկով և բոլորովին գոցուած
դուռ մը կ'իմացնէր ինծի որ հոն ներսը
մէկ մը կը բնակէր : Զանգակի ձայնն
երկայն ժամանակէ 'ի վեր դադրած
էր . չորս կողմը կը տիրէր խոր գերեզ-
մանական լռութիւն մը , զոր միայն պա-
տին քովէն գացող առուակի մը մէջ
վազած ջրոյն խուլ կարկաջիւնը կ'ընդ-
հատէր : Բիւր խորհուրդներով վարա-
նեալ և տատանեալ , չէի գիտեր թէ ար-
դեօք զարնեմ այն դուռը և ապաւեն մը
խնդրեմ , թէ անկից երթամ և ուրիշ
թաքստոց մը փնտրուեմ : Բայց կարծես
թէ պէտք չէր՝ և չէի ալ կրնար այն տե-
ղէն զատուիլ . տեսակ մը անբացատրելի
նախազգացում մը ինծի կ'իմացնէր թէ